ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

15 սեպտեմբերի 2016 թվականի N 93-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N57-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի ապրիլի 12-ի <Նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու մասին> N 43-Ա հրամանով հաստատված հավելվածի 6-րդ և 7-րդ կետերը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի հունիսի 15-ի <<Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին կից հասարակական խորհրդի կազմը հաստատելու մասին>> N57-Ա հրամանի 1-ին կետում՝ <<Նոնա Եղիազարյան>> բառերը փոխարինել <<Արթուր Համբարձումյան>> բառերով:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ